ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ» ՁԱԽՈՂՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (2008-2010ԹԹ.)

Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը ռուս-թուրքական մերձեցումից հետո 2016 թ.հոկտեմբերի 14-ին հայտարարել էր, որ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ ղարաբաղյան հակամարտության ապաարգելափակման հարցում: «Կարևոր գործոն է այն, որ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ Լեռնային Ղարաբաղի ապաարգելափակման հարցում՝ նորմալ տնտեսական փոխգործակցություն ապահովելով տարածաշրջանում»,- ասել էր նա լրագրողներին[1]: Նա նաև նշել էր, որ եթե Հայաստանն ու Թուրքիան վերադառնան իրենց պայմանավորվածությունների կատարմանը, ապա իրենք միայն ուրախ կլինեն: «Մեր կարծիքով՝ ղարաբաղյան հակամարտության հարցում առաջընթացն առանցքային կլինի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար: Դա կյանք է: Տեսնենք՝ ինչ կստացվի», - ավելացրել էր Լավրովը: Նրա խոսքով՝ Թուրքիան կարող է դրական դեր խաղալ «ողջ տարածաշրջանում նորմալ տնտեսական փոխազդեցություն ապահովելու՝ լոգիստիկ, տրանսպորտային, ենթակառուցվածքային հարցերում»[2]: Դրանից հետո Եվրամիությանը՝ Թուրքիայի անդամակցության պատրաստվածության վերաբերյալ Եվրահանձնաժողովի հրապարակած տարեկան զեկույցում, որում ընդհանուր առմամբ գնահատական էր տրված Թուրքիայի վարած տնտեսական և քաղաքական բարեփոխումներին, նշվում էր, որ Եվրամիությանն անդամակցել ցանկացող

---

[1] В МИД России считают, что Турция может содействовать разблокированию нагорно-карабахского урегулирования, http://ru.armeniasputnik.am/karabah/20161014/5168519/Karabah-konflikt-Tyrciya-posrednik.html

[2] Ռուսաստանի արտգործնախարարությունը հայտնում է, որ Թուրքիան կարող է նպաստել ղարաբաղյան հակամարտության ապաարգելափակմանը, http://armeniasputnik.am/karabah/20161014/5170326/ankara-xarabax.html

Թուրքիայում հետընթաց է արձանագրվել մի շարք ոլորտներում: Մասնավորապես, զեկույցի Հարավային Կովկասին և Կենտրոնական Ասիային նվիրված հատվածում նշվում էր, որ պաշտոնական Անկարան բացահայտ աջակցություն էր հայտնել Ադրբեջանին 2016 թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած բախումների ընթացքում[3]: Սա հստակ ազդակ էր Լավրովին, որ Թուրքիան չի կարող հակամարտության մեջ անաչառ միջնորդ լինել: Իսկ նոյեմբերի 17-ին հայ-թուրքական սահմանի բացման մասին խոսել էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Sputnik Արմենիային» տված բացառիկ հարցազրույցում[4]: Անդրադառնալով հայ-թուրքական կարգավորման ձախողման պատճառներին Ս. Սարգսյանն ասել էր. «որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ թուրքերը պատրաստ չեն վավերացնել արձանագրությունները և փաստացի պատրաստ չեն հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ առանց նախապայմանների»[5]:

Այս համատեքստում տեղին է կրկին անդրադառնալ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման տապալման պատճառներին, դիտարկելով նաև արտաքին գործոնների, մասնավորապես Ադրբեջանի ազդեցությունն այդ գործընթացում:

Թուրքիայի՝ 2008-2010 թթ. Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման փորձը որոշ թուրք վերլուծաբանների կողմից գնահատվում է որպես ԱԶԿ-ի համար պատմական նշանակության նախագիծ[6]:

Շուրջ երկու տարի այդ գործընթացն առաջնային էր տարածաշրջանային առաջատարի հավակնություններ ունեցող

---

[3] Լ. Մուսայելյան, Բրյուսելը մեղադրում է Անկարային՝ ապրիլյան քառօրյա պատերազմում Ադրբեջանին աջակցելու մեջ, http://www.azatutyun.am/a/28117585.html

[4] Սարգսյան. Ցանկացած հարսանիք պահանջում է երկուսի համաձայնությունը. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Sputnik Արմենիային» տված բացառիկ հարցազրույցում խոսել է հայ–թուրքական սահմանի բացման մասին http://armeniasputnik.am/politics/20161117/5509134/hayastan-turqia-sahman.html

[5] Նույն տեղում:

[6] А. Горгулу, Турция и Южный Кавказ в 2010 г., Кавказ-2010. Ежегодник Института Кавказа, Ереван: 2012, с. 140.

Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության համալիրում: ԱԶԿ-ի «հայկական նախաձեռնությունը» նաև Թուրքիայի նախկին արտգործնախարար, հետագայում՝ վարչապետ Ա. Դավութօղլուի հռչակած «զրո խնդիր հարևանների հետ» նոր արտաքին քաղաքականության սկզբունքի յուրատեսակ «փորձաքար» հանդիսացավ:

Հայաստան-Թուրքիա երկխոսության տարբեր փուլերում ի հայտ եկան «կողմնակի» կամ «ածանցյալ» գործընթացներ և գործոններ, որոնք որոշակի ազդեցություն ունեցան կողմերի դիրքորոշումների և բանակցությունների արդյունքների վրա: Դրանց թվում կարևորագույններից մեկը Ադրբեջանի գործոնն էր: Հարկ է նշել, որ ադրբեջանական գործոնը թուրքական հասարակական կարծիքի վրա և հատկապես թուրքական վերնախավերի հայացքների ու տեսակետների ձևավորման գործում շատ մեծ է եղել: Դա պայմանավորված է ոչ միայն Թուրքիայի՝ էներգակիրների հարցում Ադրբեջանից կախվածության հանգամանքով կամ Ադրբեջանի՝ Թուրքիայի տնտեսության մեջ աճող ներդրումների պատճառով, ինչպես նաև երկու երկրների բիզնես-էլիտաների ստվերային կոռուպցիոն շահերի միահյուսվածությամբ: Խնդիրը նրանում է, որ Ադրբեջանի անկախացումից հետո նրա և Թուրքիայի Հանրապետության բազմաբնույթ և բազմաշերտ հարաբերությունները նպաստեցին նրան, որ ահռելի թվով Ադրբեջանի քաղաքացիներ տեղափոխվեցին ժամանակավոր, իսկ ավելի ուշ նաև մշտական բնակության Թուրքիա: Այս մարդիկ, կապ պահպանելով Ադրբեջանի իրենց հարազատների ու բարեկամների հետ, սկսեցին միահյուսվել թուրքական հասարակությանը՝ աստճանաբար դառնալով նրա մի մասը: Նրանք հանդիսացել և հանդիսանում են կարևոր գործոն Թուրքիայում ադրբեջանական իշխանությունների կողմից հակահայկական տրամադրությունների բորբոքման համար: Նրանց գործնական ազդեցությունը թուրքական հասարակական կարծիքի վրա անընդհատ մեծացել է և հիմք է դարձել, որպեսզի թուրքական քաղաքական վերնախավը հաշվի առնի թե՛ սեփական քաղաքացիների, թե՛ մշտական բնակություն հաստատած ադրբեջանցիների տրամադրությունները:

Փարիզի Քաղաքական գիտությունների համալսարանի Միջազգային հետազոտությունների կենտրոնի (CRI) գիտաշխատող Բայրամ Բալջը վերլուծելով Թուրքիայի ու Ադբր-

բեջանի միջև առկա հատուկ հարաբերությունները, որոնք ունեն պատմական, բայց նաև տնտեսական, մշակութային, աշխարհագրական և քաղաքական հիմքեր, գրում է. «Թուրքիայի համար Ադրբեջանը սովորական երկիր չէ, կարելի չէ այն համեմատել մյուս հարևանների հետ: Դա գալիս է նրանց ինքնությունների մոտիկությունից, քանի որ երկու երկրներն էլ պատկանում են նույն թյուրքականությանը, կամ գոնե նույն ընդհանուր տեսլականն ունեն թյուրքականության վերաբերյալ, ինչը այնքան էլ նախկին ԽՍՀՄ մյուս թյուրքալեզու երկրների պարագան չէ: Թեև տարբերություններ կան Անատոլիայի թուրքական ինքնության ու Ադրբեջանի թյուրքական ինքնության միջև, բայց այդ մոտիկությունն ընդունում ու ստանձնում են երկուստեք: Միևնույն ժամանակ՝ մոտ քսան տարի է Թուրքիան ձևավորում է ազգային և թյուրքիստական (և նույնիսկ պանթուրքական) դիսկուրս, որտեղ իրեն շատ լավ է զգում Ադրբեջանը: Բացի այդ, երկու ժողովուրդները աշխարհագրորեն մոտ են, և ընդհանրապես՝ Թուրքիայի և Ադրբեջանի միջև հարաբերություններն ավելի լավ պատկերացնելու համար պետք է նշել, որ քեմալական հանրապետության ստեղծման օրից բազմաթիվ ադրբեջանցի մտավորականներ, որոնք մաս էին կազմել ռուսական կայսրության մահմեդական բարենորոգչական շարժման, Թուրքիա գնացին մասնակցելու Թուրքիայի Հանրապետության հիմնադրմանը: Դա նպաստեց երկու երկրների միջև հատուկ կապերի ստեղծմանը: Ի վերջո անկախության հռչակումներից ի վեր՝ այն հանգամանքը, որ երկու երկրներն ունեն նույն «թշնամին», նույն հակառակորդը՝ Հայաստանը, մերձեցման այս երևույթն է ստեղծել: Երկու երկրների մերձավորությունից երբեմն կարող է փոխկախվածություն առաջանալ: Կողմերից ոչ մեկը չի կարող հենց այդպես իր ուզածն անել. նա պետք է հաշվի առնի իր գործընկերոջ դիրքը: Նրանք պարտավոր են միմյանց ցույց տալ անխախտ հավատարմություն: Մի քանի տարի առաջ մենք այդ բանը տեսանք հայ-թուրքական մերձեցմամբ, որը քիչ էր մնում իրականություն դառնար հայ-թուրքական սահմանի բացմամբ... Այնտեղ մենք տեսանք, որ Թուրքիան իր ադրբեջանցի գործընկերոջ պատճառով չէր կարող հենց իր ուզածն անել: Ադրբեջանը, իհարկե, Թուրքիայից շատ ավելի փոքր և նվազ ազդեցիկ երկիր է, բայց նա որոշ հարցերում Թուրքիային «պատանդ է վերցրել»: Իսկ Թուրքիան չի կարող անտեսել իր

հարևանի խոսքը, քանի որ թուրքական հասարակությունը Ադրբեջանի հանդեպ շատ դրական վերաբերմունք ունի»[7]:

Բալջը հատկապես կարևորում է Թուրքիայի և Ադրբեջանի միջև առկա տնտեսական կապերը: Մասնավորապես, SOCAR-ը (State Oil Company of Azerbaijan Republic, Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային ընկերություն) շատ խոշոր ընկերություն է և Թուրքիայում ներդրումային շատ մեծ կարողություններ ունի: Հայտնի է նաև, որ նա ներդրումներ է կատարում նավթարդյունաբերությունից բացի այլ ոլորտներում՝ մասնավորապես թուրքական բանկային համակարգում: Իսկ հակառակ ուղղությամբ՝ Ադրբեջանում գործում են հարյուրավոր թուրքական ընկերություններ, լինի սննդի սպասարկման ոլորտում, թե փոքր բիզնեսում կամ շինարարությունում: Սակայն երկու երկրների միջև տնտեսության գլխավոր սեկտորը և հարաբերությունների հիմնական առանցքը դեռևս մնում է էներգետիկան: Ինչ էլ լինի ռեժիմի բնույթը Անկարայում կամ Բաքվում, ներդրումների նման մակարդակը կախվածություն է առաջացնում: Անկարան, օրինակ, իր որոշումներում չի կարող լիովին անկախ լինել, քանի որ Ջեյհանը (կարևոր նավահանգիստ՝ Միջերկրական ծովի ափին, վերջին կետն է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան խողովակաշարի, որը Կասպից ծովից Ազերի-Շիրակ-Գյունեշլի հանքավայրերի նավթն է հասցնում – Ա. Հ.) մեծ գումարներ է բերում դեպի Թուրքիա: Էներգետիկայի այսպիսի կարևոր սեկտորի վրա հիմնված այս տեսակի հարաբերությունների խնդիրն է սա, երբ, նույնիսկ, եթե քաղաքական կամ գաղափարական տարաձայնություններ ունեք՝ ստիպված եք ձեր հարաբերություններում տարբերակում դնել, նշում է թուրք փորձագետը[8]:

ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո, մինչև 2008 թ. Թուրքիայի բոլոր համապատասխան ծրագրերի կենտրոնում թուրք-ադրբեջանական կապերն էին, և այդ առումով Թուրքիայի քաղաքականությունը Ադրբեջանի նկատմամբ առանձնահատուկ փոփոխություն չկրեց[9]: Դեռևս 2003 թ. հունիսին Մադրիդում

---

[7] Բայրամ Բալջը, Թուրքիա-Ադրբեջան՝ Մեկ ազգ, երկու պետություն http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-turkey-ar/turkey-azerbaijan-one-nation-two-states-armenian

[8] Նույն տեղում:

[9] Թուրքիայի՝ Ադրբեջանի նկատմամբ քաղաքականության վերաբերյալ տե՛ս Գ. Արշակյան, Ա. Եղիազարյան, Թուրքիայի քաղաքականության առաջ-

ՆԱՏՕ-ի Համագործակցության խորհրդի նախարարական նիստից հետո Թուրքիայի այն ժամանակվա ԱԳ նախարար Աբդուլլահ Գյուլը սեփական նախաձեռնությամբ հանդիպեց ՀՀ պաշտոնակից Վարդան Օսկանյանին: Իր հուշերում այդ հանդիպման մասին Վարդան Օսկանյանը գրում է. «2003 թ. հունիսի 3-ին Մադրիդում հանդիպեցի Աբդուլլահ Գյուլի հետ: Սա մեր առաջին հանդիպումն էր: Այդ օրը Գյուլն իրոք թելադրեց հանդիպման օրակարգը՝ նշելով, որ Թուրքիան ցանկանում է բնականոն հարաբերություններ հաստատել բոլոր հարևանների հետ:

Հաջորդ անգամ Գյուլի հետ հանդիպեցի նույն տարվա սեպտեմբերի 25-ին ՄԱԿ-ում, Գլխավոր ասամբլեայի նիստի ընթացքում: Այս հանդիպումը, սակայն, մի քայլ հետ էր նախորդից: Գյուլը նշեց, որ Ղարաբաղի հարցին ընդհանրապես չանդրադառնալ չենք կարող, այն անպայման պետք է լինի օրակարգում: Ես պատասխանեցի, որ խնդիր չեմ տեսնում այնքան ժամանակ, քանի դեռ հայ-թուրքական հարաբերությունները չեն կապվում Ղարաբաղի կարգավորման հարցին:

Մեր երրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2003 թ. դեկտեմբերի 5-ին Բրյուսելում, ՆԱՏՕ-ի Համագործակցության խորհրդի նախարարական նիստի ընթացքում: Պայմանավորվածության համաձայն՝ հանդիպմանը ես ներկայացել էի իմ ցուցակով, մինչդեռ Գյուլի ձեռքին ոչինչ չկար: Այդուհանդերձ, մենք կետ առ կետ անցանք իմ ներկայացրած ցուցակի վրայով, և Գյուլն ասաց, որ առնվազն առաջին մի քանի կետերի իրականացման հարցում նա որևէ խնդիր չի տեսնում... Մինչև մեր հաջորդ հանդիպումը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը 2004թ. ապրիլին պաշտոնական այց կատարեց Թուրքիա: Այցի ընթացքում Գյուլը հայտարարեց, որ ներկայում թուրք-հայկական սահմանի վերաբացումը բացառվում է: Դա ինձ համար բացահայտ նշան էր, որ մենք վերադառնում ենք զրոյական կետի»[10]:

Վարդան Օսկանյանի դիտարկմամբ, թեև Թուրքիայի նոր իշխանությունները գիտակցել էին, որ իրենց երկիրն առանձնապես չի շահել Հայաստան-Թուրքիա հարաբերությունները

նահերթություններն Անդրկովկասում 2008-2011 թթ. և թուրք-ադրբեջանական հարաբերությունները, «21-րդ ԴԱՐ», թիվ 1(47), 2013, էջ 57-77:

[10] Վ. Օսկանյան, Անտեսված դասեր, http://www.mediamax.am /am/column/12231/

հայ-ադրբեջանական հակամարտության լուծման հետ կապելու քաղաքականությունից, այնուամենայնիվ թերագնահատել էին Ադրբեջանի գործոնը ու լծակները Թուրքիայի վրա[11]:

Հետագա տարիներին, հատկապես 2007 թ. ողջ ընթացքում Թուրքիան փորձեց իրագործել Հարավային Կովկասը պառակտելու քաղաքականությունը: Դրա նպատակը մի դաշինքի ստեղծումն էր, որը սկզբում կլիներ տնտեսական, հետագայում փորձելով այն վերածել ռազմաքաղաքականի: Ծրագիրը պետք է ներառեր Վրաստանը և Ադրբեջանը, որոնք պետք է լինեն Թուրքիայի կրտսեր դաշնակիցները և բացառում էր Հայաստանի մասնակցությունը: Ինչպես նկատում է Ռ. Սաֆրաստյանը, դա աննախադեպ երևույթ էր Հարավային Կովկասում և, ըստ էության, այն ժամանակվա վարչապետի խորհրդական, պրոֆ. Ահմեթ Դավուդօղլուի՝ Թուրքիային անմիջականորեն հարող տարածաշրջաններում, առաջին հերթին, իհարկե, Հարավային Կովկասում «ռազմավարական խորք» ստեղծելու հայեցակարգի իրականացումն էր[12]:

Թուրքիա-Ադրբեջան հարաբերություններում կյանքի կոչվեցին ռազմավարական նշանակության նախագծեր (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղ, 2007 թ. սկսված Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք երկաթգծի

---

[11] Vartan Oskanian, "Turkey's Missed Opportunity", http://www.project-syndicate.org/commentary/turkey-s-missed-opportunity#Yc62oHDEI6LYA5Mr.99

[12] Ռ. Սաֆրաստյան, Թուրքիայի և հայ-թուրքական հարաբերությունների շուրջ, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=507 Ա. Դավութօղլուի աշխարհաքաղաքական տեսությունը շարադրված է նրա՝ Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, Istanbul, Küre Yayınları, 2003թ. գրքում: Կովկասի մասին իր գրքում նա գրում է. «Տարածաշրջանային առումով՝ առավել լայնածավալ արտաքին քաղաքականության հորիզոններ գնալու նպատակով պետք է մոտակա ցամաքային ավազանի հետ սահմանային հարևանների հետ կապերն ամրապնդող հարաբերությունները կարգավորել... Սահմաններից այն կողմ կնքված դաշինքներն արժեքավոր են...պետք է քայլեր անել փոխկախվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ... շեշտը դնել հասարակությունների միջև տնտեսական ու մշակութային տարրի ուժեղացման վրա», տե՛ս Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, Istanbul, Küre Yayınları, 2003, s. 117-118.

շինարարություն), որոնց նշանակությունը դրսևորվեց 2008-2010 թթ. երկկողմ հարաբերությունների ճգնաժամի ընթացքում:

Հայ-թուրքական բանակցային գործընթացի արագացման իրական խթան հանդիսացավ 2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմը[13]:

Հարևան Վրաստանում պատերազմը և դրա հեռանկարները Հարավային Կովկասում թուրքական, ռուսական և արևմտյան շահերի վրա հանգեցրին Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման կարևորության և անհրաժեշտության հասունացմանը: Մեկ ամիս անց Թուրքիայի այն ժամանակվա արտգործնախարար Ալի Բաբաջանը կասի, որ Վրաստանում պատերազմը «ցույց տվեց, որ մենք պետք է նոր մոտեցում ցուցաբերենք Կովկասում հակամարտությունների կարգավորմանը», ներառյալ Հայաստանի պարագայում[14]:

Ինչպես նշում են վերլուծաբանները, Վրաստանում Ռուսաստանի միջամտությունը հանկարծ մատնանշեց Թուրքիայի տարածաշրջանային քաղաքական և տնտեսական շահերի խոցելիությունը: Պատերազմը Թուրքիայի տարածաշրջանային շահերին առնչվող մի շարք խնդիրներ հստակեցրեց՝ Ռուսաստանն ի վիճակի է ուժ գործադրել Կովկասում: Վրաստանը, հատկապես Սաակաշվիլիի բախտախնդրությունը հաշվի առնելով, ենթակա էր ապակայունացման և ռուսական ներխուժման՝ ամենայն հավանականությամբ կասկածի տակ դնելով ներկայիս և ապագա խողովակաշարերի պաշտպանության իր ունակությունը: Մեկնաբանները նշում էին, որ ներդրողներն սկսել են անհանգստություն արտահայտել Նաբուկոյի և տրանս-կասպիական խողովակաշարերի ծրագրերի վերաբերյալ, քանզի Վրաստանի դեպքերը մեծացրեցին նավթային և գազային ճանապարհների խոցելիության ըմբռնումը[15]:

---

[13] "Caucasus Conflict Gave Rise to Turk-Armenian Rapproachement", Turkish Daily News, September 5, 2008; Mitat Çelikpala, "The new battle zone for global hegemony: the Caucasus", Turkish Daily News, October 22, 2008. Պատերազմի ընթացքի մասին տե՛ս С. Минасян, Пятидневная война августа 2008 г.: Военно-политический анализ, Кавказ-2008, Ереван, 2010, с. 106-153.

[14] "Turkey ready to discuss diplomatic ties with Armenia", Hurriyet Daily News, 6 September 2008.

[15] И. В. Охрименко, Турция и кризис на Кавказе. Некоторые полити-

Անմիջապես պատերազմական գործողություններին հետևած 2008 թ. օգոստոսի 12-ին Մոսկվա կատարած այցի ընթացքում Թուրքիայի վարչապետ Էրդողանը առաջարկեց Կովկասյան միություն՝ Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմ ստեղծել, որը «կուժեղացներ տարածաշրջանի երկրների միջև տնտեսական կապերը և կնպաստեր խնդիրների խաղաղ կարգավորմանը»[16]:

Հարկ է ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ Կովկասը միավորելու գաղափարը նոր չէր թուրքական դիվանագիտության համար: Դեռևս 2000 թ. հունվարին Վրաստան կատարած այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հանդես եկավ «Հարավային Կովկասի կայունության պակտի» ստեղծման առաջարկով, որը, սակայն հետագա ընթացք չունեցավ[17]: Այս անգամ իրադրությունն այլ էր. Թուրքիան ստացել էր դրական արձագանք պլատֆորմի բոլոր հավանական մասնակիցներից (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան + Ռուսաստան ու Թուրքիա), բացի Վրաստանից: Վերջինս հրաժարվում էր մասնակցել Ռուսաստանի հետ համատեղ որևիցե նախաձեռնության, քանի դեռ իր տարածքում գտնվում էին ռուսական զորքեր: Ուշագրավ էր այն հանգամանքը, որ Ադրբեջանը Հայաստանի մասնակցության վերաբերյալ նմանատիպ առարկություններով պաշտոնապես հանդես չեկավ, ինչը, հավանաբար, Թուրքիայի ուժեղ ճնշման արդյունք էր[18]: Սակայն ակնհայտ էր, որ «Պլատֆորմի» պոտենցիալ անդամ-երկրների միջև առկա հակամարտությունները (Հայաստան-Ադրբեջան, Վրաստան-Ռուսաստան), ինչպես նաև խոշոր դերակատարներ ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Իրանի չընդգրկման փաստը զրկում էին այդ նախաձեռնությունը կենսունակությունից: Չնայած պաշտոնական Մոսկվայի առերևույթ դրական արձա-

ческие и экономические аспекты, http://www.iimes.ru/rus/stat/2008/ 19-10-08a.htm

[16] Deniz Devrim and Evelina Schulz, "The Caucasus: Which Role for Turkey in the European Neighborhood", Insight Turkey, Vol. 11, No. 3, 2009, p. 181. Թուրքիայի այդ նախաձեռնության մասին տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Հարավային Կովկասում Թուրքիայի նոր նախաձեռնության մասին, http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=739

[17] "Demirel suggests Caucasus Stability Pact", Hürriyet Daily News, 16 January 2000.

[18] "Kavkasya Işbirliğine Aliyev Desteği", Radikal, 20.08.2008.

գանքների, այնուամենայնիվ հստակ չէր, թե Ռուսաստանը, որ ռուս-վրացական պատերազմի հետևանքով մեծացրել էր իր ազդեցությունը տարածաշրջանում, կցանկանա այն կիսել Թուրքիայի հետ: Թուրքիան, իր հերթին, այդ ձևաչափում հնարավորություն կստանար ակտիվ դերակատարում ունենալ Կովկասում, Մոսկվայի հետ մշտական շփման մեջ գտնվելով՝ թույլ չտալ, որ Ռուսաստանը միակողմանի որոշումներ ընդունի այդ տարածաշրջանում[19]:

Այսպիսով կարելի է նշել, որ նախաձեռնելով «Կովկասյան կայունության և անվտանգության պլատֆորմը», Թուրքիան նպատակ էր հետապնդում մեծացնել սեփական ազդեցությունը տարածաշրջանում: Անկարայի այդ փորձի մեջ Ռուսաստանի դերի գիտակցումը և տարածաշրջանում ազդեցությունը նրա հետ «կիսելու» առաջարկը նորույթ էր ԱԶԿ-ի քաղաքականության մեջ: Այդ նախաձեռնության մեջ կարևոր մաս էր կազմում նաև Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը, առանց որի «Պլատֆորմի» իրականացումն անհնար կլիներ:

2008 թ. սեպտեմբերի 26-ին Թուրքիայի, Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները եռակողմ հանդիպում անցկացրին Նյու Յորքում: Մինչև հանդիպումը Հայաստանի և Ադրբեջանի դիվանագետները հանդիպեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը քննարկելու համար: Ըստ հաղորդագրությունների, թուրք և ադրբեջանցի պաշտոնյաները «լրջորեն քննարկեցին» Նաբուկո ծրագրում Հայաստանի մասնակցության հարցը որպես «Ղարաբաղյան խաղաղության համապարփակ պակտի մաս»: Թեև հանդիպման ընթացքում ադրբեջանական կողմը հայտարարեց, որ չի «համագործակցի Հայաստանի հետ նախքան Հայաստանի կողմից գրավյալ տարածքների վերադարձը, Ադրբեջանի ինքնիշխան իրավունքների վերականգնումը այդ տարածքների նկատմամբ և Հարավային Կովկասում խաղաղության հաստատումը», Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանը հավաստիացրեց, որ «Հայաստանի և Թուրքիայի միջև ընթացող բանակցություն-

[19] Ա. Հովհաննիսյան, Թուրքիա. ազնիվ միջնորդություն թե՞ քաղաքական սակարկություն, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VI, Երևան, 2009, էջ 35:

ները անպայման կնպաստեն նաև Ղարաբաղյան հարցի շուտափույթ լուծմանը»[20]:

Թուրք վերլուծաբան Միթաթ Չելիքփալան նշում է, որ ինքը՝ Գյուլը, կարծես համոզված էր դրանում: Սեպտեմբերի 10-ին Բաքու կատարած այցի ընթացքում այդ առիթով նա ասել էր, որ «կասկած չկա, որ ադրբեջանական գրավյալ տարածքների ազատագրումը. . . կխթանի շատ արդյունավետ տնտեսական համագործակցություն տարածաշրջանում: Խողովակաշարերը և ճանապարհային հաղորդակցությունը ամբողջ կովկասյան տարածաշրջանը կներառեն»[21]: Նույն տարվա հոկտեմբերին Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը նոր դերակատարում առաջարկեց Ռուսաստանի համար՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև միջնորդության հարցում: Իսկ 2008 թ. նոյեմբերի 2-ին մերձմոսկովյան Մայնդորֆում Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպման արդյունքում ստորագրված հռչակագիրը՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ թուրքական կողմի «ակնկալիքներին» կարծես լրացուցիչ հույսեր էր տալիս[22]: Հարկ է նշել, որ ողջ այս ժամանակահատվածում Ռուսաստանն ակտիվորեն աջակցում էր հայ-թուրքական բանակցային գործընթացին, քանի որ անհրաժեշտ էր համարում ռուս-վրացական պատերազմից հետո ստեղծված իրավիճակում՝ իր ռազմավարական գործընկեր Հայաստանի համար, որտեղ նաև ռուսական ռազմակայան է տեղադրված, այլընտրանքային ճանապարհային ուղիներ ապահովել: Ու թեև տարածաշրջանային խնդիրների շուրջ թուրքական կողմի հետ բանակցելիս պաշտոնական Մոսկվան ընդգծում էր, որ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը երկու առանձին գործընթացներ են, այնուամենայնիվ փորձում էր տպավորություն ստեղծել, որ ռուսական աջակցությամբ ընթացող Ղարաբաղյան հարցի շուրջ Հայաստան-

[20] Shahin Abbasov, "Azerbaijan: potential pipeline deal could help settle Nagorno-Karabakh issue", 30 September, 2008, http://www.eurasianet.org/departments/insight/article/eav093008a.shtml

[21] М. Челикпала, Турция и Южный Кавказ в 2009 г., Кавказ-2009, Ереван, 2011, с. 181.

[22] "Armenia, Azerbaijan Sign Joint Declaration Over Nagorno-Karabakh", November 2, 2008, http://www.rferl.org/content/Kremlin_Hosts_Peace Talks_Over_NagornoKarabakh/1337420.html

Ադրբեջան հանդիպումներում որոշակի առաջընթաց կա: Այսպես, օրինակ, ռուսական թերթերից մեկին տված հարցազրույցի ժամանակ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել էր, որ երբ մոտ ապագայում Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը փաստ կդառնա, Թուրքիան «կօգնի Հայաստանին նորմալ կապ հաստատել արտաքին աշխարհի հետ, բնականաբար, Անկարայի և Երևանի միջև պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատելու միջոցով: Չլուծված երկու-երեք հարց է մնացել, մասնավորապես՝ Լաչինի միջանցքի հարցը»[23]:

Բնականաբար, այս տիպի հայտարարությունները ԱՀԿ-ի ղեկավարությունը, որը ներգրավված էր հայ-թուրքական կարգավորման գործընթացում, օգտագործում էր թե՛ ներքին ընդդիմության քննադատություններին պատասխանելու, և թե՛ «եղբայրական» Ադրբեջանից հնչող դժգոհությունն ու անհանգստությունը «փարատելու» համար:

Ամփոփելով նշենք, որ Ահմեթ Դավութօղլուն, ով հանդիսանում էր ԱՀԿ-ի արտաքին քաղաքականության «ճարտարապետը» իր «Ռազմավարական խորք» աշխատությունում Մերձավոր Արևելքի ու Բալկանների հետ միասին Կովկասը դիտարկում է որպես Թուրքիայի մերձակա ցամաքային ավազան: Սակայն, ըստ նրա, Թուրքիան չի կարողացել Կովկասն ընդունել իբրև մեկ ամբողջական տարածաշրջան, այլ ընկալել է այն միայն հայ-ադրբեջանական հակամարտության տեսանկյունից: Միևնույն ժամանակ նա նշում է, որ Ադրբեջանը հանդիսանում է Կովկասում Թուրքիայի ամենակարևոր ռազմավարական դաշնակիցը, առանց որի Թուրքիան տարածաշրջանում իր դերը մեծացնելու, նաև դեպի Կասպից ծովի ավազան ծավալվելու հնարավորություն չի ունենա: Հետևաբար, Ադրբեջանի հողային կորուստը Ղարաբաղյան պատերազմում Դավութօղլուն համարում է հետսառըպատերազմյան փուլում նաև Թուրքիայի մեծագույն կորուստը[24]: Նման մոտեցումը նոր չէր. Հարավային Կովկասի նորանկախ պետությունների հետ հարաբերությունները Թուրքիան դիտարկել է Կարսի պայմանագրով հաստատված համակարգի տեսանկյունից, և Թուրքիայի

[23] Л. Казарян, Выйти из западной геополитической ловушки, http://www.fondsk.ru/news/2008/10/19/9078-9078.html

[24] Ahmet Davutoğlu, Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası, Konumu, Istanbul, Küre Yayınları, 2003, s. 127-128.

քաղաքական վերնախավում սկսած 1993 թ.-ից գոյություն ունի այն մտավախությունը, որ ՀՀ-ը, լուծելով ԼՂ հարցը, հանդես կգա Նախիջևանի, ապա և Կարսի, Իգդիրի, Արդահանի նկատմամբ պահանջատիրությամբ: Ձգտելով կանխել նման զարգացումը՝ Թուրքիան որդեգրել է Հայաստանին ԼՂ-ում կասեցնելու քաղաքականությունը: Ինչպես նշում է թուրք վերլուծաբան Այբարս Գյորգյուլյուն, Թուրքիայում այս հարցում թե՛ քաղաքական դաշտում, թե՛ հասարակությունում առկա է համակարծություն (consensus)[25]:

2009 թ.մարտ ամսվա վերջում Թուրքիայում անցկացված ՏԻՄ ընտրություններից հետո կրկին հաղթանակ տարած ԱԶԿ կուսակցության կառավարությունը վերադարձավ իր նախանշած օրակարգին՝ այդ թվում նաև միջազգային հարաբերությունների ոլորտում: Թուրքիայում պատրաստվում էին ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարաք Օբամայի այցին: Ապրիլի 24-ի մոտենալուն ընդառաջ Ալի Բաբաջանը հորդորում էր «երրորդ կողմին» (տվյալ դեպքում ԱՄՆ-ի նախագահին, որը բազմիցս հայտարարել էր, որ իր երկիրը շահագրգռված է հայ-թուրքական հարաբերությունների բարելավմամբ, մյուս կողմից էլ խոստացել էր ապրիլյան ուղերձում 1915 թ. իրադարձությունները որակել որպես ցեղասպանություն) չխառնվել, քանի որ ցանկացած անզգույշ քայլ իբր կարող է վնասել գործընթացին[26]:

Արձանագրենք, որ թուրքական մամուլում, Օբամայի այցից առաջ չէին բացառում նրա ուղերձում «ցեղասպանություն» բառի օգտագործումը[27]: Թուրքիայում նախագահ Գյուլի հետ տված համատեղ ասուլիսում Օբաման կարողացավ դիվանագիտական հնարք գործածելով արձանագրել, որ թեև ինքը չի հրաժարվել իր կարծիքից ցեղասպանության վերաբերյալ, այնուամենայնիվ խուսափեց այդ եզրը օգտագործելուց: Միաժամանակ Օբաման կոչ արեց երկու կողմերին առողջ և սթափ

---

[25] Aybars Görgülü, Alexander Iskandaryan, Sergey Minasyan, Türkiye-Ermenistan Diyalog Serisi:Yak\nlaşma Sürecini Incelemek, TESEV Yayinlarl, Istanbul, 2010, s.11.

[26] Հայաստան-Թուրքիա: Մեծ բանավեճը /Պատկերավոր պատմություն/, օգոստոս, 2009, էջ 53, www.esiweb.org

[27] "Barrack Obama Visit provides condition for opening Turkey-Armenia border": Turkish Center for int"l Relations and Strategic Analysis Director, www.turkishweekly.net

մոտեցում ցուցաբերել պատմության խրթին հարցերի վերաբերյալ[28]:

Պետք է նշել, որ այն բանից հետո, երբ այդ օրերին արտասահմանյան մամուլում լուրեր էին տարածվում հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման վերաբերյալ և նույնիսկ կոնկրետ ժամկետներ նշվում, Ադրբեջանը ակտիվ ջանքեր էր գործադրում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Արցախյան հարցի լուծման հետ կապելու ուղղությամբ: Ադրբեջանը նույնիսկ դիմեց բացահայտ շանտաժի՝ սպառնալով դադարեցնել գազի մատակարարումը Թուրքիա: Վրաստանում գտնվող Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը հայտարարեց, որ իրենք պատրաստ են Վրաստանի հետ պայմանագիր կնքել՝ ուղղորդելով ադրբեջանական գազը դեպի Ուկրաինա: «Հայկական օկուպացիայի պայմաններում սահմանի բացումը հակասում է Ադրբեջանի շահերին»,- ասել էր նա: «Ձայնակցելով» Մամեդյարովին Թուրքական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (TURKSAM) տնօրեն Սինան Օղանը ընդգծել էր, որ թուրք-հայկական սահմանի բացումը որևէ մեկի համար անակնկալ չպետք է լինի, սակայն Անկարան հենց այնպես սահման չպետք է բացի, փոխարենը նա պետք է պահանջի համապատասխան զիջումներ[29]:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի Ստամբուլի «Քաղաքակրթությունների երկխոսություն» գագաթաժողովին չմասնակցելը նույնպես այդ շանտաժի մարտավարության մի մասն էր: Ադրբեջանական գործոնին կանդրադառնանք առանձին: Նշենք, սակայն, որ միաժամանակ Լոնդոնում գտնվող վարչապետ Էրդողանը հայտարարել էր, որ Թուրքիան չի դադարեցնի Հայաստանի շրջափակումը, քանի դեռ հայերը շարունակում են պնդել 1915 թ. ցեղասպանության փաստը և գրաված պահել Ադրբեջանի տարածքը: «Մենք չենք կարող մենակ թողնել մեր ադրբեջանցի եղբայրներին»,- ասել էր նա: Նրա դիրքորոշումը, որին արձագանքեցին Անկարայում մյուս նախարարները և հաստատությունները հաջորդ օրերի ընթաց-

[28] "Remarks by President Obama to the Turkish Parliament", April 6, 2009, http://www.whitehouse.gov/the_press_office/remarks-by-president-obama-to-the-turkish-parliament

[29] Р. Миркадыров, Баку предъявил ультиматум Анкаре, www.zerkalo.az

քում, ազդարարում էր փոփոխություն քաղաքական հռետորության մեջ[30]:

Բազմաթիվ դիվանագիտական խուսանավումներից հետո, ապրիլի 22-ի լույս 23-ի գիշերը աշխարհի բազմաթիվ լրատվամիջոցներով տարածվեց Շվեյցարիայի միջնորդությամբ ստորագրված հայ-թուրքական համատեղ հայտարարությունը, որով կողմերը պատրաստակամություն էին հայտնում կարգավորել երկկողմանի հարաբերությունները առանց որևէ նախապայմանի[31]:

Բազմաթիվ երկրներ, ԵՄ-ը և ԱՄՆ-ը ողջունեցին և իրենց աջակցությունը հայտնեցին այս գործընթացին: ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման իր ապրիլի 24-ի ուղերձում չօգտագործեց «ցեղասպանություն» եզրը, փոխարինելով այն «Մեծ եղեռն» արտահայտությամբ[32]:

Սույն հայտարարությունը միանշանակ չընդունվեց թե՛ Թուրքիայում, թե՛ Հայաստանում: Ապրիլի 27-ին տեղի ունեցած Թուրքիայի ԱԱԽ նիստում վերահաստատվեց, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը խոչընդոտելու ջանքերը մնում են երկրի քաղաքականության օրակարգում: Միևնույն ժամանակ Թուրքիայի քաղաքական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց հայտարարություններում շարունակում էին պնդել, որ Հայաստանի հետ սահմանը չի բացվի, մինչև հայկական զորքերը դուրս չբերվեն «ադրբեջանական գրավյալ տարածքներից»[33]:

Արձանագրենք նաև, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները իրենց համատեղ ասուլիսում (Երևան, ապրիլի 27) նշեցին, որ հայ-թուրքական հարաբերությունները և ԼՂ հակա-

---

[30] Տե՛ս "Başbakan Erdoğan Bakü'de", Sabah, Mayıs 13, 2009; "Prime Minister Erdogan Puts Baku's Armenia Concerns Rest", Today's Zaman, May 14, 2009.

[31] Joint Statement of the Ministers of Foreign Affairs of the Republic of Turkey, the Republic of Armenia and the Swiss Federal Department of Foreign Affairs, April 22, 2009, http:// www.mfa.gov.tr/no_56_22_april_2009/press-release-regarding-the-turkish-armenian-relations.en.mfa

[32] Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day, 24 April 2009, http://www.whitehouse.gov/the_press_office/statement- of- president- barack- obama –on- armenian- remembrance- day

[33] Հայաստանյան արձագանքների մասին տե՛ս Թուրքիան առաջին հերթին խաբելու է ինքն իրեն, հարցազրույց ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանի հետ, «168 ժամ», ապրիլի 28-29, 2009:

մարտության կարգավորումը առանձին գործընթացներ են, որոնք սակայն ընթանալու են զուգահեռ[34]:

«Ճանապարհային քարտեզի» կնքումից շատ չանցած կարևոր փոփոխություն տեղի ունեցավ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունում: Մայիսի 1-ին ԱԳ նոր նախարար նշանակվեց Ա. Դավութօղլուն, ով մինչ այդ Թուրքիայի վարչապետ Ռ.Թ. Էրդողանի արտաքին հարցերով խորհրդականն էր: Դավութօղլուի նշանակումը կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ նա էր հանդիսանում Թուրքիայի արտաքին քաղաքականության «զրո խնդիր հարևանների հետ» նոր վեկտորի հեղինակներից մեկը:

Օգոստոսի 31-ի երեկոյան հայտարարվեց, որ Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիան նախաստորագրում են ՀՀ և Թուրքիայի միջև «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» և «Երկկողմ հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները: Այս քայլը խթան հանդիսացավ տեղական և միջազգային ձևաչափերով հասարակական քննարկումների էլ ավելի ակտիվացման և Հայաստանի ու Սփյուռքի քաղաքական, հասարակական ուժերի կողմից կարգավորման փաստաթղթերում ձևակերպումների դեմ ընդվզման ցույցերի նախաձեռնման համար[35]: Միաժամանակ Թուրքիայի ազգայնական հատվածը և ադրբեջանական կողմը ևս ուժգնացրեցին արձանագրությունների դեմ ուղղված հռետորաբանությունը: Թուրքագետ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ղեկավար Ալեքսանդր Սաֆարյանի խոսքերով, «ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցության ղեկավար Դենիզ Բայքալը և Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Դևլեթ Բահչելին, հետևողականորեն դատապարտում են Թուրքիայի իշխանություններին՝ ընդգծելով, որ վերոհիշյալ արձանագրությունները չեն բխում Թուրքիայի ազգային շահերից, որ փաստաթղթերում բացակայում է «Ղարաբաղի հարցը», ինչն էլ, ինքնըստինքյան, անհնար պետք է դարձներ երկխոսությունը Հայաստանի և Թուրքիայի միջև: Դենիզ Բայքալը նույնիսկ կարծիք է հայտնել, որ արձանագրությունների ստո-

[34] Բ.Թունյան, Ասուլիս՝ ողջամիտ հույսերի մասին, «168 ժամ» թերթ, 28-29 ապրիլ, 2009:

[35] Թ. Յակոբեան, Թուրքական «Սապահ»-ը եւ հայկական պնդումները, «Ազդակ», 12 հոկտեմբեր, 2009:

րագրումը լրջորեն վտանգում է Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները, և թուրք-ադրբեջանական եղբայրական կապերը չպետք է դառնան «թուրքական կառավարության սխալի զոհը»: Նա նաև ասել է. «Ցույց տվեք ինձ մի այնպիսի երկիր, որի եղբայրները գտնվում են պատերազմի մեջ, նրանց սպանում են, իսկ նրանք սեղմում են իրենց եղբայրների թշնամիների ձեռքը»: Թուրք քաղաքական վերնախավի, գիտական ու լրագրողական ընտրանու ներկայացուցիչների զգալի մասը, պարզապես, չի կարող չկրել Հայաստանին նախապայմաններ առաջադրող նախկին հայտարարությունների ու հրապարակումների «բեռը»: Բնականաբար, այդ լրագրողներն ու վերլուծաբաններն այսօր նույնպես հայտարարում են, որ Թուրքիայի ներկայիս ղեկավարները և իշխող Արդարություն և զարգացում կուսակցությունն «արտաքին ուժերի ճնշման տակ» նահանջ են գրանցել Հայաստանի նկատմամբ ճնշումներ կիրառելու քաղաքականությունից՝ «հայկական ագրեսիայի դեմ միայնակ թողնելով եղբայրական Ադրբեջանին»[36]:

Վերջապես, ԱԳ նախարարների բանակցությունների արդյունքում 2009 թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի միջնորդությամբ Ցյուրիխում ստորագրվեցին Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և հարաբերությունները զարգացնելու մասին երկու արձանագրություն[37]:

Արձանագրությունների ստորագրումն Ադրբեջանում ընդունվեց որպես մարտահրավեր[38], առաջ բերելով երկու երկրների միջև երբևէ տեղ գտած թերևս ամենալուրջ ճգնաժամը, որը ստացավ «դրոշների պատերազմ» անվանումը[39]:

---

[36] Ալ.Սաֆարյան, Ի՞նչ մտահոգություններ ունի թուրքական հասարակական կարծիքը, http://www.armar.am/?p=21743

[37] Հայաստանի ԱԳՆ-ի պաշտոնական կայքը, Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, http://www.mfa.am/hy/country-by-country/tr

[38] О. Абдуллаев, Азербайджан- 2009: основные тенденции общественно-политического и социально-экономнческого развития, Нормализация как вызов, Кавказ-2009, Ежегодник Института Кавказа, Ереван, 2011, с. 20-24.

[39] Elif Kanca, The «Single Nation, Two States» Idea: Turkey-Azerbaijan Relations in the Post-Soviet Period, in History Lessons of the 20th Century: «Our Neighbours» and «Us» (Turkey and the South Caucasus), Tbilisi, 2011, p.166-168. Ցյուրիխյան հանդիպումից մի քանի օր հետո՝

Ներկայացնելով արձանագրությունները 2009 թ. հոկտեմբերի 21-ի Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստում ԱԳ նախարար Ահմեթ Դավութօղլուն կրկին հաստատեց այն դիրքորոշումը, համաձայն որի Թուրքիան չի բացի սահմանը առանց Ադրբեջանի համաձայնության: Միևնույն ժամանակ Դավութօղլուն նշեց, որ արձանագրություններում Թուրքիայի շահերին հակասող բան չկա, որ արձանագրությունների ստորագրումը նշանակում է ընդհանուր սահմանի երկկողմանի ճանաչում, որը «հսկայական նշանակություն» ունի Թուրքիայի համար: ԱԳ նախարարն ընդգծեց, որ Թուրքիան փորձելու է դիվանագիտական ճանապարհով ճնշում գործադրել Մինսկի խմբի վրա՝ արագացնելու Ղարաբաղյան կարգավորման գործընթացը: Թուրքիան ոչ թե փոխում է իր քաղաքականությունը, ասաց նա, այլ գործում է «պարտադրված անհրաժեշտության» տրամաբանությամբ: Այս նոր երանգը, որը հնչեց ԱԳ նախարարի խոսքում, կարող էր նշանակել, որ վերջնական որոշումներ կայացնելիս, Թուրքիան, այնուամենայնիվ, կղեկավարվի իր սեփական, այլ ոչ թե «եղբայրական Ադրբեջանի» շահով[40]: Հակադարձելով ընդդիմադիր Հանրապետական-ժողովրդական կուսակցության (CHP) պատգամավոր Շյուքրյու

հոկտեմբերի 14-ին, Բուրսայում տեղի ունեցավ Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը, որին ներկա էին նաև ՀՀ և Թուրքիայի նախագահներ Սարգսյանը և Գյուլը: Համաձայն ՖԻՖԱ-ի կայացրած որոշման՝ արգելվում էր մարզադաշտ բերել ադրբեջանական դրոշներ: Շուտով ադրբեջանական էլեկտրոնային պարբերականներով տարածվեց տեսանյութ, որտեղ երևում էր, թե ինչպես են թուրք ոստիկանները ադրբեջանական դրոշները նետում աղբամանը: Որպես պատասխան՝ հաջորդ օրը Բաքվում Շեհիդների ծառուղում գտնվող թուրք զոհվածներին նվիրված հուշարձանի մոտից հանվեցին թուրքական դրոշները, նույն բանը կատարվեց նաև Բաքվում Թուրքիայի դեսպանատանը կից կրոնի հարցերով (Diyanet İşleri) ներկայացուցչության առանձնաշենքի մոտ: Պաշտոնապես դա մեկնաբանվում էր Ադրբեջանի օրենսդրության այն կետով, թե Ադրբեջանում օտարերկրյա դրոշներն իրավունք ունեն բարձրացվելու միայն տվյալ երկրների դեսպանատներում: Այս ամենից հետո կողմերը մտան դիվանագիտական նախազգուշացումների և բանակցությունների մի փուլ, որը տևեց մինչև հոկտեմբերի 29-ը, երբ մի շարք երկկողմ հանդիպումներից և պայմանավորվածություններից հետո կեսգիշերին թուրքական և ադրբեջանական դրոշները կրկին հայտնվեցին իրենց նախկին տեղերում:

[40] “Ermeni Protokolü Meclis’te” , Hürriyet, Ekim 21, 2009.

Էլեքդաղի քննադատությանն առ այն, որ արձանագրությունները ներկայացվում են նախքան Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, Դավութօղլուն ասաց, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Թուրքիայի համար ոչ պակաս կարևոր է, քան սեփական երկրինը[41]:

Հոկտեմբերի 15-ին Անկարայում Էգեմեն Բաղըշը, ով Թուրքիայի՝ Եվրամիության անդամակցության հարցերով գլխավոր բանագնացն էր, հայ լրագրողների հետ զրույցում բառացիորեն ասաց. «Շատ բարդ կլինի Թուրքիայի խորհրդարանից ակնկալել հայ-թուրքական երկու արձանագրությունների վավերացումը, քանի դեռ Ղարաբաղի հարցում չկա նկատելի առաջընթաց»: Մանավանդ, որ Թուրքիայի խորհրդարանի ընթացակարգը թույլ էր տալիս ամիսներով և նույնիսկ տարիներով ձգձգել վավերացման գործընթացը[42]:

Այսպիսով, պարզ դարձավ Թուրքիայի վարած երկակի քաղաքականությունը. մի կողմից ամբողջ աշխահին ցուցադրվում էր, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը մոտ է, իսկ մյուս կողմից պաշտոնական Անկարան շարունակում էր պնդել, որ հայ-թուրքական սահմանը միակողմանիորեն փակելու պատճառ հանդիսացող Արցախյան հիմնախնդիրը չի դադարել իրենց համար նախապայման մնալ:

Թուրքիայի տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (TESEV-Turkish Economic and Social Studies Foundation) փորձագետ Այբարս Գյորգյուլուն Ադրբեջանի քայլերը բնութագրում է որպես «շոու»: «Հետքի» հարցին, թե ինչու արձանագրությունները ստորագրելուց հետո Թուրքիան նախապայմաններ առաջ քաշեց, Ա. Գյորգյուլուն ասաց. «Ալիևը ամեն քայլի մասին տեղեկացվում էր Անկարայի կողմից, սակայն որևէ կարծիք չէր հայտնում հայ-թուրքական մերձեցման մասին, իսկ արձանագրությունների ստորագրությունից հետո ասաց, թե թուրքերը դավաճանել են իրենց:

[41] Նույն տեղում:

[42] Կ.Սասունյան, Ով ավելի շուտ աչքը կթարթի... Հայաստանը թե Թուրքիան, 18.09.2009, http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=436

Ադրբեջանի խորհրդարանականներն էլ եկան Թուրքիա ու շոու սարքեցին»[43]:

Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով Ադրբեջանն ակնհայտորեն սկսեց շահարկել Ռուսաստանի հետ էներգետիկ մերձեցումը՝ ցուցադրելով, թե կարող է տապալել NABUCCO ծրագիրը, որի իրագործման հետ թե՛ Թուրքիան, թե՛ Արևմուտքը մեծ հույսեր են կապում: Հիշենք, որ երբ հոկտեմբերի 14-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը գտնվում էր Բուրսայում, Ալիևը ստորագրում էր ձգձգված համաձայնագիրը՝ ադրբեջանական գազը Ռուսաստանին վաճառելու վերաբերյալ: Բաքուն նաև «հիշեցրեց» Անկարային, որ Թուրքիան չափազանց էժան է գնում ադրբեջանական գազը, և Բաքուն կարող է վերանայել այդ գինը[44]: Պաշտոնական Անկարան, իր հերթին, ի պատասխան Ադրբեջանի «էներգետիկ հավակնությունների», փորձում էր խաղարկել Իրանի հետ ձեռք բերած համաձայնությունը՝ «Հարավային Պարս» նախագծի վերաբերյալ[45]:

2008-2010 թթ. հայ-թուրքական կարգավորման գործընթացը առաջին լուրջ փորձությունը դարձավ Թուրքիայի՝ Ադրբեջանի հետ հարաբերություններում: Ադրբեջանցի վերլուծաբան Էլդար Մամեդովի խոսքերով «հայկական նախաձեռնությունից» հետո Թուրքիայի ու Ադրբեջանի միջև ավարտվեց «մեկ ազգ՝ երկու պետության ռոմանտիկ ժամանակաշրջանը»[46]: Թուրքիայի «հայկական նախաձեռնությունն» ի ցույց դրեց Թուրքիայի ադրբեջանական քաղաքականության թույլ կողմերը, մասնավորապես այն, որ ընդհանուր էներգակիրների նախագծերից բացի չկային այլ՝ երկկողմ հարաբերությունների խորացմանը նպատակամղված նախագծեր: Նման բացի գիտակցումից հետո կողմերը ձեռնամուխ եղան այն լրացնելուն:

---

[43] Երբ Էրդողանը զգաց, որ իրեն բացառել են գործընթացից, փորձեց տապալել այն, http://hetq.am/arm/news/765/erb-erdoxany-zgac-or-iren-bacarel-en-gortsyntacic-pordzec-tapalel-ayn.html

[44] С. Манукян, Экономические и энерготранзитные вопросы Азербайджана с соседними странами, Регион и мир, Институт политических исследований, 2010, (1), с. 82.

[45] Հարցազրույց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող, թուրքագետ Անուշ Հովհաննիսյանի հետ, http://www.aysor.am/am/news/2009/11/23/anush-hovhannisyan/

[46] Eldar Mamedov, “Turkish-Azerbaijani relations: reality check”, 1, March, 2011, http://eurodialogue.org/Turkish-Azerbaijani-relations-reality-check.

2010 թ. օգոստոսի 16-ին Բաքվում ստորագրված «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին» պայմանագիրը նախատեսում էր, որ կողմերը բոլոր հնարավոր միջոցներով օգնելու են միմյանց հարձակման ենթարկվելու դեպքում, ինչպես նաև համագործակցելու են ռազմական ու ռազմատեխնիկական բնագավառներում[47]: Այդ պայմանագիրը նոր մակարդակի էր բարձրացնում Ադրբեջանի հետ Թուրքիայի հարաբերությունները: Մյուս կողմից՝ Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը օգոստոսի 20-ին Երևան կատարած այցի ընթացքում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ ստորագրեց Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմակայանի մասին պայմանագրում փոփոխություններ կատարելու արձանագրությունը, որով երկարաձգվում էր ռուսական ռազմաբազայի տեղակայման ժամկետը ՀՀ-ում[48]: 2010 թ. սեպտեմբերի 16-ին Բաքվում Ռեջեփ Թայիփ Էրդողանի ու Իլհամ Ալիևի կողմից ստորագրվեց նաև Թուրքիայի ու Ադրբեջանի միջև Բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհորդ ստեղծելու մասին պայմանագիրը[49]: Խորհրդի առաջին նիստը, որը տեղի ունեցավ Իզմիրում 2011 թ. հոկտեմբերին, և որի ընթացքում ստորագրված երկու փաստաթղթով որոշվեցին 2017-2042 թթ. Շահ Դենիզ-2 հանքից Թուրքիա գազի ներմուծման և Թուրքիայի տարածքով գազի տարանցման պայմանները՝ նշանավորեց Թուրքիայի և Ադրբեջանի միջև գազի շուրջ տեղի ունեցած անհամաձայնության ավարտը:

Այսպիսով, հայ-թուրքական գործընթացի համատեքստում Թուրքիայի և Ադրբեջանի միջև քաղաքական զարգացումները երևան բերեցին մի շարք էական հակասություններ և տարակարծություններ և նշանավորեցին վերջինիս վերածվելը «արբանյակ» պետությունից ավելի կարևոր դերակատարի, որը լուրջ լծակներ ունի Թուրքիայի վրա: Իր հերթին Թուրքիան, ինչպես գտնում էին որոշ փորձագետներ, փորձում էր օգ-

---

[47] Обнародован текст военного соглашения между Азербайджаном и Турцией, 22 Декабрь 2010, http://regnum.su/news/1359151.html

[48] Россия и Армения подписали договор о продлении срока аренды военной базы, 22 августа, 2010, http://russian.eurasianet.org/node/31248.

[49] “Turkey, Azerbaijan establish Strategic Cooperation Council”, 16 September 2010, http://www.worldbulletin.net/?aType=haber&ArticleID= 63950.

տագործել Հայաստանի հետ սահմանների բացման սպառնալիքը որպես Ադրբեջանի վրա ճնշում բանեցնելու տարր՝ կասպյան գազը Թուրքիայի համար շահավետ պայմաններով փոխադրելու հարցում[50]:

Նշենք նաև, որ իշխող ԱԶԿ-ն կուսակցական «Նշանակետ 2023» ծրագրում հանգամանալի ներկայացվում է տարածաշրջանի վերաբերյալ տեսլականը: Մասնավորապես, Թուրքիան Կովկասում առանձնահատուկ դեր է վերապահում Ադրբեջանին, նշելով որ շարունակելու է իր ջանքերը՝ Լեռնային Ղարաբաղի «գրավմանը» վերջ դնելու ուղղությամբ: Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը ԱԶԿ-ն հստակ կապում է Ղարաբաղի հարցը լուծելու և «Ցեղասպանության անհիմն պնդումներին» վերջ դնելու հետ[51]:

Թուրք վերլուծաբան Նիգյար Գյոքսելը համեմատում է Թուրքիայի՝ հայ-թուրքական հարաբերությունների բոլոր բարդ խնդիրները «մեկ զամբյուղի մեջ» տեղադրելով մեկընդմիշտ լուծելու ցանկությունը «մոլախաղության» հետ[52]: Ցյուրիխյան արձանագրությունների և ԱԶԿ-ի «հայկական նախաձեռնության» ձախողումը նա բացատրում է Թուրքիայի ակնկալիքների չափազանցությամբ և հաշվարկների թերիությամբ: Նա նշում է, որ գերագնահատվել էր Հայաստանի նախագահի՝ Սփյուռքի վրա ազդելու հնարավորությունը և բաց սահմանի դիմաց Ղարաբաղյան հարցում զիջումների գնալու պատրաստակամությունը, ինչպես նաև թերագնահատվել էր Ադրբեջանի հակազդեցությունը գործընթացին[53] :

Ինչպես նկատում է ամերիկյան Քարնեգի հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ Թոմաս դե Վաալը, ներգրավվելով հաշտեցման գործընթացի մեջ՝ պաշտոնական Անկարան հաջողեց մի բարդ գործընթացը (հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը) շաղկապել մեկ այլ ավելի բարդ գործընթացի (Ղարաբաղյան հարցի) հետ, որից երկուսն

[50] С. Минасян, Турецкий вектор внешней и внутренней политики Армении, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=1984

[51] Տե՛ս «Hedef 2023» siyasi vizyonu, www.akparti.org.tr/beyanname2011

[52] Diba Nigar Goksel, “The Rubik’s Cube of Turkey-Armenia Relations”, UNISCI Discussion Papers, N⁰ 23 (May 2010), pdf, p.202.

[53] Նույն տեղում:

էլ տուժեցին[54]: Թուրքիայի և Ադրբեջանի ագրեսիվ պահվածքի ազդակները հանգեցրին նրան, որ հայկական կողմը որոշակիորեն կոշտացրեց դիրքորոշումը: Սա իր հստակ արտահայտումը գտավ աշխատանքային այցով Ստրասբուրգում գտնվող ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2011թ. հունիսի 22-ին ԵԽԽՎ լիագումար նիստում ներկայացրած ելույթում[55]:

Այսպիսով, հայ-թուրքական կարգավորման գործընթացի տապալմամբ Անկարան զգալիորեն սահմանափակեց «Կովկասյան մեծ խաղում» որպես ազդեցիկ տարածաշրջանային խաղացող հանդես գալու իր լծակները և ստեղծելով ավելի շատ բաժանարար գծեր՝ նպաստեց տարածաշրջանում իր մրցակից Մոսկվայի գերակա դիրքերի ամրապնդմանը[56]:

Բացի դրանից, եթե Թուրքիան նպատակ ուներ Հարավային Կովկասում սեփական ազդեցությունը տարածելով՝ հայ-թուրքական կարգավորման գործընթացին զուգահեռ միջնորդել նաև Ղարաբաղյան հարցում, ապա իր կողմնակալ կեցվածքով նա միայն խորացրեց հայկական կողմի արդեն իսկ առկա անվստահությունը: Վերջապես, տարածաշրջանում փորձելով հանդես գալ որպես որոշում կայացնող և անվտանգություն ապահովող երկիր, Թուրքիան ապացուցեց, որ շատ հարցերում հենց ինքն է հանդես գալիս որպես ապակայունացնող և անվտանգության տեսանկյունից խնդիրներ հարուցող գործոն, դրանով իսկ նվազեցնելով սեփական անվտանգային միջավայրի բարելավման հնարավորությունը:

---

[54] Thomas de Waal, “Turkey and Armenia: A Second Chance?”, Turkish Policy Quaterly, March 2011, http://carnegie.ru/experts/?fa=479

[55] Սերժ Սարգսյանի ելույթը ԵԽԽՎ-ում. Մենք պատրաստ ենք խնդիրները հաջորդ սերունդներին չթողնել, http://news.am/arm /news/ 64219.html

[56] Igor Torbakov, “Russia and Turkish-Armenian Normalization: Competing Interests in the South Caucasus”, Insight Turkey, Vol.12/No 2/2010, pp. 31-39; Nigar Goksel, “Turkey’s Nagorno-Karabakh Conundrum”, Caucasus Edition, Journal of Conflict Transformation, Wednesday, June 1, 2011, http://caucasusedition.net/author/goksel/, Sergei Markedonov, “A Nonlinear Reconciliation: Normalization of Armenian-Turkish Relations in the Past and in the Future”, Russia in Global Affairs, Number 1, Jenuary/March 2011, http://eng.globalaffairs.ru/number/A-Nonlinear-Reconciliation-15148